ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/1336 «24» 11 2023 թ.

ՄՍ և Ընկերներ ՍՊԸ (ՀՎՀՀ 02535853)
ք.Երևան,Երկաթուղային.4Փ/2
Հեռ.՝ 093666330
էլ. հասցե՝ mcandfriendo@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ Գնորդ) և ՄՍ և Ընկերներ ՍՊԸ-ի (այսուհետ՝ վաճառող) միջև 06.04.2023 թվականին կնքված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/34-1 ծածկագրով տնտեսական ապրանքների ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ՄՍ և Ընկերներ ՍՊ ընկերությունը չի կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ վերոգրյալ պայմանագրի շրջանակներում մատակարարը 2023 թվականի I եռամսյակ մատակարարման վերջնաժամկետով գնորդին պետք է հանձներ փրկարար ծառայության համար նախատեսված թվով 400 (չորս հարյուր) հատ ամպ LED 60X60, որոնք չեն մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է պայմանագով սահմանված պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-

րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և ՄՍ և Ընկերներ ՍՊԸ-ի միջև 06.04.2023 թվականին կնքված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/34-1 ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

ՄՍ և Ընկերներ ՍՊԸ-ին առաջարկվում է սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 /հինգ/ օրացույցային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 6.3 կետերով նախատեսված տուգանք՝ 18 000 /տասնութ հազար/ ՀՀ դրամ, պայմանագրի 6.2 կետերով նախատեսված տույժ՝ 180 000 /հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ, հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով:

Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան, Նալբանդյան 130/:

ՄՍ և Ընկերներ ՍՊԸ-ի կողմից նշված գանձման ենթակա գումարները չվճարվելու դեպքում ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52